

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից (այսուհետ՝ Տեսչական մարմին) հանրությունից ստացված բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու հետ կապված հարաբերությունները:
2. Տեսչական մարմինը հանրությունից ընդունում և քննության է առնում տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված բողոքները, որոնք գտնվում են Տեսչական մարմնին վերապահված լիազորությունների շրջանակներում:
3. Բողոքները կարող են ներկայացվել առձեռն, էլեկտրոնային եղանակով, փոստով, ինչպես նաև կարող են փոխանցվել այլ պետական մարմիններից:
4. Բողոքները գրանցվում են իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության (այսուհետ՝ Վարչություն) համապատասխան գրանցամատյանում:
5. Վարչությունը ուսումնասիրում է բողոքը և եթե՝
 - 1.) այն բավարարում է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N711-Ն որոշմամբ հաստատված Տեսչական մարմինների գործունեության ոլորտում հանրությունից ստացվող բողոքների ընդունման ընդհանուր կարգի պահանջներին (այսուհետ՝ Պահանջներ), ապա այն Տեսչական մարմնի ղեկավարի կողմից մակագրվում է Վարչությանն ու իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնին,
 - 2.) այն չի բավարարում Պահանջներին, ապա այդ մասին ներկայացնում է առաջարկ Տեսչական մարմնի ղեկավարին և բողոքին ընթացք չի տրվում, որից հետո այն հաշվառման նպատակով մակագրվում է իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնին:
6. Եթե բողոքը բավարարում է Պահանջներին, սակայն Վարչության կողմից ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ՝
 - 1.) բողոքը ներկայացվել է ոչ իրավասու տեսչական մարմնին կամ բողոքում ներկայացված հարցերից մեկը կամ մի քանիսը վերաբերվում են այլ մարմնի իրավասությանը, ապա բողոքը կամ այդ մասով տեղեկատվությունը եռօրյա ժամկետում վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին:

- 2.) բողոքով բարձրացված հարցը (հարցերը) չի վերաբերում ինչպես Տեսչական մարմնի, այնպես էլ որևէ այլ վարչական մարմնի իրավասությանը, ապա բողոքը և դրան կից փաստաթղթերը, դրանք ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վերադարձվում է դիմողին՝ նշելով պատճառների մասին:
- 3.) բողոքը վերաբերվում է Տեսչական մարմնի իրավասություններին և համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 2-րդ կետին, ապա Վարչության զեկուցագրի հիման վրա բողոքի հասցեատեր է ճանաչվում նաև վերահսկողություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումը (ները):
7. Վերահսկողություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումը կազմում է ստուգում իրականացնելու մասին համապատասխան հրամանի նախագիծ և ներկայացնում Տեսչական մարմնի ղեկավարի ստորագրմանը:
8. Ստուգման արդյունքները՝ դրանք ամփոփելուց հետո եռօրյա ժամկետում համապատասխան վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումը (ները) տրամադրում է իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:
9. Բողոքը ստանալու պահից 30-օրյա ժամկետում իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժինը կազմում է բողոքի պատասխանի նախագիծ և ներկայացնում Տեսչական մարմնի ղեկավարի ստորագրմանը:
10. Տեսչական մարմինը բողոքը ստանալու պահից 30-օրյա ժամկետում պատասխանում է բողոք ներկայացնող անձին:
11. Ստուգում իրականացնող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները ստուգման արդյունքները ամփոփելուց հետո եռօրյա ժամկետում ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն են ներկայացնում տվյալ տնտեսվարող սուբյեկտի ռիսկի գնահատման համար հիմք հանդիսացող տեղեկատվությունը (ոլորտայի և անհատական ռիսկերի ձևավորման միավորների հանրագումարը):
12. Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչությունը բողոքները վերլուծում և օգտագործում է ռիսկերի կառավարման համար:
13. Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժինը
 - 1.) վարում է ստացված բողոքների (փաստաթղթային և այլ կապի միջոցներով) վերաբերյալ վիճակագրություն և յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո հաշվետվություն է ներկայացնում իր կառավարման խորհրդին:
 - 2.) պատասխանում է հեռոխոսազանգերով հանրության կողմից ուղղված հարցադրումներին, տրամադրում խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում առաջարկում է սահմանված կարգով ներկայացնել գրավոր բողոք Տեսչական մարմնին: